ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՐՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՊԱՍԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունում վերլուծվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության կողմից մշակված և տարածած «Քաղաքական կոմպաս» թեստի արդյունքները:

Քաղաքական կողմնացույցը բացահայտում է մարդու քաղաքական գաղափարախոսական կողմնորոշումը երկչափ քաղաքական առանցքի մոդելի հիման վրա: Սույն թեստը, որի արդյունքների վերլուծությունը ներկայացվելու է ստորև, մշակվել է՝ հաշվի առնելով հայաստանյան սոցիալ-քաղաքական, սոցիալ-մշակութային իրականությունը:

Պետք է նշել, որ առկա արդյունքները չի կարելի ավտոմատ կերպով տարածել ողջ հասարակության վրա: Թեստը սոցիոլոգիական հարցում չէ՝ այստեղ չկա ընտրանք, այն չի ապահովում սոցիալական հետազոտության համար կարևորագույն պայմաններից մեկը՝ ներկայացուցչականությունը: Սակայն հաշվի առնելով այն, որ սույն թեստը հասանելի է եղել համացանցում, լայնորեն տարածվել է սոցիալական ցանցերում, գովազդվել է՝ մեծ է հավանականությունը, որ այս թեստը լրացրել են շատ տարբեր շերտեր, խմբեր ներկայացնող մեծ թվով մարդիկ: Տվյալների բազան ցույց է տալիս, որ թեստը լրացրել է ավելի քան 14 հազար օգտատեր, որից առանձնացվել է մոտ 3.5 հազար իրական օգտատեր Հայաստանի ողջ տարածքից:

Հարկ է նշել, որ օգտատերերի բացարձակ մեծամասնությունը երիտասարդ տարիքային խմբի ներկայացուցիչներ են: Ընդ որում, օգտատերերի 70 տոկոսը կանայք են:



Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, ինչպես նաև այն, որ արդյունքները վերլուծվել են տվյալագիտական (data science) և քաղաքագիտական մոդելներով, կարող ենք եզրակացնել, որ թեստի արդյունքները կարող են մոտավորապես ուրվագծել Հայաստանի հասարակության, հատկապես, երիտասարդության գաղափարախոսական կողմնորոշումները, ցույց տալ այս կամ այն գաղափարախոսական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ լայն կամ հազվադեպ տարածում ունեցող մոտեցումները հասարակությունում: Թեստի արդյունքները կարող են նաև լավ հիմք հանդիսանալ հիպոթեզներ կառուցելու համար, որոնք կարող են ապացուցվել կամ հերքվել արդեն սոցիոլոգիական լայնամասշտաբ հետազոտության արդյունքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարկ է նշել, որ տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ չկա կորելացիա երկու առանցքների, այսինքն՝ սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային գաղափարախոսական չափումների միջև: Սա բավականին հետաքրքիր արդյունք է, որը հաստատում է լայն տարածում ունեցող թեզը, որ, օրինակ, ենթադրենք, ձախ-կենտրոնամետը սոցիալ-մշակութային չափմամբ հավասարաչափ կարող է լինել ինչպես ծայրահեղ պահպանողական, այնպես էլ, ենթադրենք, ծայրահեղ ազատական, չափավոր ազատական և այլն:



Սա նշանակում է, որ օգտատերերը միջինում չափավոր ազատական, ձախ կենտրոնամետ են: Չափավոր ազատական ձախ կենտրոնամետներին ամենից մոտ քաղաքական գաղափարախոսություններն են սոցիալ-դեմոկրատիան և սոցիալ-լիբերալիզմը: Այդ քաղաքական գաղափարախոսությունների հիմնական դրույթներն են սոցիալական տնտեսությունը, սոցիալական արդարությունը, պրոգրեսիվիզմը:





Ընդհանուր առմամբ երևանցի օգտատերերի թիվը 1470 է, որը կազմում է ընդհանուր օգտատերերի թվի 42 տոկոսը:
Սոցիալ-տնտեսական գաղափարախոսական չափմամբ նրանց ցուցանիշը -1.33 ինչը նշանակում է, որ երևանցի օգտատերերը ամենակենտրոնին բավականին մոտ ձախ կենտրոնամետ են:
Սոցիալ-մշակութային գաղափարախոսական չափմամբ նրանց ցուցանիշն է - 1.08, ինչը նշանակում է, որ երևանցի օգտատերերը վառ ընդգծված չափավոր ազատական են:

ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԿՍԵԼՆ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ Է «ԿԵՆՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ» ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համապետական կտրվածքով օգտատերերի մեծ մասի համար ընդունելի չէ ծայրահեղ պահպանողականան/ ծայրահեղ ազգայնական գաղափարախոսության առանցքային դրույթներից մեկը՝ էքսպանսիոնիստական պատերազմը: Այսպես՝ «հարձակողական պատերազմ սկսելն արդարացված է «կենսական տարածքներ» ձեռք բերելու համար» հարցին օգտատերերը պատասխանել են հետևյալ կերպով:

Օգտատերերը՝ բոլոր մարզերը միասին վերցրած (չհաշված Երևանի օգտատերերի պատասխանները), նույն հարցին համապետական կտրվածքից քիչ տարբերվող պատասխաններ են տվել:





Համապետական ցուցանիշներից որոշակիորեն տարբերվում են համապետական ընդգրկմամբ իգական սեռի օգտատերերի ցուցանիշները:

Իգական սեռի օգտատերերը մոտ 8 տոկոսով ավելի են դեմ ֆաշիստական դրույթներից մեկին:

ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՀԱՅ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՄԵՐ ԵՐԿԻՐ ՊԵՏՔ Է ԽԻՍՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ





Այստեղ էլ տեսնում ենք, որ իգական սեռի օգտատերերի մոտ փոքր ինչ ավել է այն մարդկանց թիվը, որոնք դեմ են ծայրահեղ ազգայնական բնույթի կոնկրետ այդ նարատիվին:
Այս երկու հարցերի միջև կա խիստ դրական կորելյացիա: Այսինքն ծայրահեղ աջ գաղափարախոսությանը վերաբերող «Հարձակողական պատերազմ սկսելն արդարացված է «կենսական տարածքներ» ձեռք բերելու համար» հարցին պատասխան տվողները գրեթե նույն պատասխաններն են տվել ծայրահեղ աջ գաղափարախոսությանը վերաբերող մեկ այլ՝ «Ազգությամբ ոչ հայ ներգաղթյալների մուտքը մեր երկիր պետք է խիստ սահմանափակել» հարցին:



ՀԱՅ ԱԶԳԸ ՈՐՈՇ ԱԶԳԵՐԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ Է

Այս դրույթը, մի շարք այլ դրույթների հետ, թույլ է տալիս հասկանալ՝ արդյոք անձը ծայրահեղ ազգայնական է և որքանով է ծայրահեղ ազգայնական: Այս դրույթը այն մասին է, թե արդյոք մարդիկ համարում են, որ ազգը, որին իրենք պատկանում են, օժտված է այնպիսի առանձնահատուկ դրական հատկանիշներով, որոնք ազգին դարձնում են գերակա առնվազն որոշ այլ ազգերի նկատմամբ: Նշված հարցին օգտատերերը պատասխանել են հետևյալ կերպ:

Կին օգտատերերի պատասխանները, ընդհանուր առմամբ, բավականին տարբերվում են տղամարդ օգտատերերի պատասխաններից:

Հարկ է նշել, որ այս դրույթի վերաբերյալ երևանյան և մարզային օգտատերերի մոտեցումների միջև կա որոշակի տարբերություն: Երևանյան օգտատերերը փոքր ինչ ավելի են դեմ այս դրույթին, քան մարզային օգտատերերը:



Օգտատերերի տարբեր կատեգորիաների մեջ ամենից քիչ դրական պատասխանները երևանցի կին օգտատերերի շրջանում է: Այսպես՝ «խիստ համաձայն եմ» պատասխանը տվել են երևանցի կին օգտատերերի 5.56%-ը իսկ «համաձայն եմ» պատասխանը տվել է նրանց մոտ 16 տոկոսը: Այս ցուցանիշները արդեն իսկ կարող են խոսել այն մասին, որ ամենից ոչ ծայրահեղ ազգայնական խումբը Հայաստանում երևանցի կանայք են:

ԱՎԱՆԴԱԿԱՆ (ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ) ԱՐԺԵՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ՄԵՐ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՔԸ. ՄԵՐ ԱԶԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԻՐ ՉԵՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

Երևանցի օգտատերերի (արական և իգական սեռի ներկայացուցիչները միասին վերցրած) վերաբերմունքը տվայլ դրույթի վերաբերյալ գրեթե նույնական է այս հարցի մասով համապետական կտրվածքով օգտատերերի ցուցանիշներին:



Երևանցի կին օգտատերերի էլ ավելի մեծ մասն է դեմ հանդես գալիս այս դրույթին:





Այս հարցի մասով մի հետաքրքրական ցուցանիշ՝ Տավուշի մարզից որևէ օգտատեր չի տվել «խիստ համաձայն եմ» պատասխանը: Սակայն Տավուշի ընդհանուր ցուցանիշները քիչ են տարբերվում համապետական կտրվածքով ցուցանիշներից:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼ ?





Հետաքրքրական է, որ մարիխուանայի լեգալիզացման կողմնակիցները ավելի շատ են տղամարդ օգտատերերի շրջանում՝ մոտ 28 տոկոս:
Մինչդեռ կին օգտատերերի շրջանում լեգալիզացման կողմնակիցները մոտ 18 տոկոս են: Սա հետաքրքիր փաստ է այն առումով, որ այլ մի շարք սոցիալ-մշակութային հարցերի մասով հենց կին օգտատերերի շրջանում ամենից շատն են եղել առաջադիմական բնույթ ունեցող պատասխանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում հանրային դիսկուրսում ավանդաբար խիստ բացասական մոտեցում է արտահայտվում յուրաքանչյուր տեսակի թմրանյութերի նկատմամբ՝ կարող ենք ենթադրել, որ պրոգրեսիվ կանանցից շատերը միգուցե այս հարցը դիտարկում են հանրային առողջության պահպանության դիտանկյունից, ինչպես, օրինակ, ծխախոտի դեպքում է, և գտնում են, որ չի կարող այս երևույթը համարվել պրոգրեսիվ մի բան: Թեև համաշխարհային տենդենցը մարիխուանայի լեգալացումն է:



ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏՔ Է ԲԱՑԱՌԵԼ: ՇՈՒԿԱՆ ՊԵՏՔ Է ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎԻ

Արդեն իսկ այս հարցի պատասխաններից կարելի է մեծամասամբ հասկանալ, թե ինչպիսի սոցիալ-տնտեսական գաղափարախոսության է հակված մարդը, քանի որ հարցը վերաբերում է ֆունդամենտալ խնդրին՝ ինչպես պետք է կազմակերպվի և գործի տնտեսությունը:

Օգտատերերի մեծ մասը բացասական դիրքորոշում է հայտնել: Ուղղակի համաձայն չէ օգտատերերի մոտ 62 տոկոսը, ինչը նշանակում է, որ օգտատերերի մեծ մասը ճիշտ չի համարում մինիմալ պետության, բացարձակ ազատ շուկայի գաղափարը:

«Համաձայն չեմ» պատասխանը նաև նշանակում է, որ այդպիսի պատասխան տվողները համարում են, որ առնվազն որոշակի պետական կարգավորումները անհրաժեշտություն են, սակայն այդ պատասխանը չի նշանակում, որ մարդիկ շուկայական տնտեսության գաղափարը չեն ընդունում:

Մենք կարող ենք հիմնավոր կերպով ենթադրել, որ շուկայական տնտեսության հակառակորդները՝ այսինքն ռադիկալ ձախերը, նրանք են, որոնք տվել են «խիստ անհամաձայն եմ» պատասխանը:

Տնտեսական լիբերթարիացիները՝ այսինքն՝ ծայրահեղ տնտեսական աջերը, նրանք են, որոնք տվել են «խիստ համաձայն եմ» պատասխանը. մեր դեպքում դա օգտատերերի մոտ 2.5 տոկոսն է:



ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Այս հարցը նույնպես վերաբերում է սոցիալ-տնտեսական առումով դիրքավորմանը: Սակայն այստեղ ավելի հստակ է, թե ով է ռադիկալ ձախ. բոլոր նրանք, որոնք պատասխանում են «խիստ համաձայն» եմ:



Օգտատերերի մոտ 8 տոկոսն է նման պատասխան տվել: Կարող ենք նաև ենթադրել, որ նրանք, որոնք տվել են «համաձայն եմ» պատասխանը, չեն բացառում, որ հասարակությունում կարող են մեծահարուստներ լինել, բայց նրանց համար անընդունելի է, որ մեծահարուստները լինեն գերիշխող խավ:

Օգտատերեի մեծ մասը չի կիսում ծայրահեղ ձախական այս դրույթը և նորմալ է համարում մեծահարուստների խավի առկայությունը:

Ի դեպ, կարող ենք ենթադրել, որ «խիստ անհամաձայն եմ» պատասխան տվողները (9.28%) նրանք են, որոնք կողմ են չկարգավորվող ազատ շուկային:

ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼ



Մարմնավաճառության լեգալացմանը կողմ հանդիսացողները, թեև նույնպես փոքրամասնություն են, սակայն ավելի շատ են քան մարիխուանայի լելագլիզացմանը կողմ հանդես եկողները:

Այս հարցում էլ կին օգտատերերը փոքր ինչ ավելի քիչ են կողմ լեգալիզացմանը, քան տղամարդ օգտատերերը:

Տղամարդ օգտատերերի մոտ 41 տոկոսն է դրական պատասխան տվել, այսինքն՝ 10 տոկոսով ավելին, քան կին օգտատերերը:



ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ, ՔԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս հարցը ցույց է տալիս պլանային, սոցիալական շուկայական և շուկայական տնտեսության կողմնակիցների հարաբերակցությունը:



«Խիստ համաձայն եմ» պատասխանողները սոցիալ-տնտեսական չափումով ծայրահեղ կամ ծայրահեղին մոտ աջերն են: Այսպես՝ օգտատերերի մոտ 13 տոկոսն է այդպիսի պատասխան տվել:

«Կողմ եմ» պատասխան տվողները՝ մոտ 42 տոկոս, որը ամենատարածված պատասխանն է, առնվազն ծայրահեղ ձախ չեն, որից մի զգալի մասը ենթադրաբար ընդհանրապես ձախ չէ, ի դեպ սրա մասին է վկայում այլ սոցիալ-տնտեսական բնույթի հարցերին տրված պատասխանների վերլուծությունը:

Միանշանակ ծայրահեղ ձախ են բոլոր նրանք, որոնք տվել են «խիստ անհամաձայն եմ» պատասխանը (2.56%), միանշանակ չափավոր ձախ է օգտատերերի 22.45%-ը: Այստեղ շատ են նաև չկողմնորոշվածները՝ մոտ 20 տոկոս:

ԽՈՇՈՐ, ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԸ ՁԱՐԻՔ ԵՆ. ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ

Այս հարցը նույնպես կարող է բացահայտել մարդու մոտեցումները շուկայական տնտեսության վերաբերյալ: Ձևակերպումը չափազանց կատեգորիկ է, և օրինակ՝ «խիստ համաձայն եմ» պատասխանողները, ակնհայտ է, որ ծայրահեղ ձախ մոտեցումներ ունեն սոցիալ-տնտեսական գաղափարախոսական չափման մեջ:



Եթե հենվենք այս հարցի պատասխանի վրա կարող ենք վստահորեն ասել, որ օգտատերերի մոտ 15 տոկոսը ակնհայտ ձախական մոտեցում է ցուցաբերում:

Սակայն այստեղ հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ ռեկորդային բարձր է պատասխան չունեցողների թիվը՝ մոտ 39 տոկոս, որից շատերը կարող են հասկացած չլինել հարցը կամ տվյալ խնդիրը: Սա կարելի է դիտարկել որպես նման թեմաներով հասարակական գիտակցության և տեղեկացվածության մակարդակի ցուցանիշ:

Կարող ենք նաև ենթադրել, որ «խիստ անհամաձայն եմ» պատասխան տվողները տնտեսական լիբերթարներն են:

ԹՈՇԱԿԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԸ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ. ՎԱՂ ՏԱՐԻՔԻՑ ԹՈՇԱԿԻ ԱՆՑՆԵԼԸ ԽԻՍՏ ՎՆԱՍԱԿԱՐ Է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եթե այս դրույթին խիստ հավանություն է տրվում, նշանակում է՝ մարդը ծայրահեղ լիբերթար պատկերացումներ ունի տնտեսության կազմակերպման վերաբերյալ:

«Կողմ եմ» պատասխանը նույնպես ցույց է տալիս տնտեսական լիբերալիզմի հետևորդ լինելու մասին: Իսկ «խիստ անհամաձայն եմ» պատասխան տվողները սոցիալ-տնտեսական դիտանկյունից ակնհայտ ձախականներ են:

«Համաձայն չեմ» պատասխան տվողների հետ կապված կարելի է ասել, որ նրանք սոցիալ-տնտեսական գաղափարախոսական դիտանկյունից առնվազն ծայրահեղ աջական կամ ծայրահեղ ձախական չեն, սակայն կարող են լինել ինչպես աջ կենտրոնամետ, այնպես էլ ձախ կենտրոնամետ հայացքների տեր մարդիկ:

Այսպես, «համաձայն չեմ» պատասխանը ամենից տարածվածն է, այդպես է պատասխանել օգտատերերի մոտ 52 տոկոսը:



ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՅՍՊԻՍԻՆ՝ ՈՐՔԱՆ ԱՎԵԼԻ ՀԱՐՈՒՍՏ Է ՄԱՐԴԸ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ՀԱՐԿ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԻ



Օգտատերերի մեծ մասը՝ մոտ 63 տոկոսը, կողմ է պրոգրեսիվ հարկային համակարգին: Այսպես՝ «խիստ համաձայն եմ» պատասխանը տվել է օգտատերերի 18,52%-ը, իսկ 44,22%-ը տվել է «համաձայն եմ» պատասխանը:

Փաստացի կարող ենք ասել, որ ակնհայտ ձախական մոտեցում է ցուցաբերել օգտատերերի 18,52%-ը, իսկ 44,22%-ը կարող են լինել հիմնականում ձախ-կենտրոնամետ, սակայն նաև դեպի հնարավորինս ձախ գնացող աջ-կենտրոնամետներ:

Օգտատերերի մոտ 30%-ը ակնհայտ աջ (այդ թվում՝ մոտ 5%-ը՝ ծայրահեղ աջ) կողմնորոշում է ցուցաբերել:



ԱՋԱՏ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆ Է

Սա այն հարցերից է, երբ միայն «խիստ անհամաձայն եմ» պատասխանի դեպքում հստակ կարելի է ասել, թե ինչպիսի գաղափարախոսական կողմնորոշում ունի մարդը. այս դեպքում՝ ծայրահեղ ձախ:



Իրականում «համաձայն չեմ» պատասխանների մեջ էլ կարող են շատ լինել ծայրահեղ ձախ հայացքների տեր մարդիկ, որոնք ծայրահեղ պատասխան կարող էին չտալ, քանի որ կարող էին մտածել, որ այնպես չէ, որ առևտուրը ընդհանրապես չի նպաստում բարեկեցությանը:

Այսինքն՝ սա այն հարցն է, որով հնարավոր չէ հասկանալ մարդկանց մեծամասնության գաղափարախոսական կողմնորոշումը: Պատահական չէ պատասխան չունեցողների մեծ քանակը՝ 23.09%:

Իրականում ազատ առևտրի կոնցեպցիան աջական կոնցեպցիա է, սակայն ոչ միշտ է, որ մարդիկ այդպիսի ընկալում են ունենում, և այս թեստի արդյունքները դրա ևս մեկ վկայությունն են:

ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

Օգտատերերի մեծամասնությունը հանդես է գալիս աշխարհիկ պետության կոնցեպցիայի օգտին: Սակայն քիչ չեն նաև այդ կոնցեպցիային դեմ հանդես եկողները:

Կարելի է նկատել, որ սոցիալ-պահպանողական բնույթի հարցերի շարքում պետության և եկեղեցու սերտաճման անհրաժեշտության մասին դրույթն այն հարցերից է, որը համեմատաբար մեծ թվով կողմնակիցներ ունի նաև այն մարդկանց շրջանում, որոնք այլ հարցերում ազատական, առաջադիմական մոտեցումներ են ցուցաբերում:

Համեմատության համար նշենք, որ օգտատերերի միայն 18 տոկոսն է համաձայն, որ հայ ազգի արժեքային համակարգի հիմքում պետք է դրվեն նահապետական (ավանդական) արժեքները:

Այս յուրահատկությունը կարող է բացատրվել առաքելական եկեղեցու պատմական առաքելության փաստով: Նույնիսկ ՀՀ սահմանադրությունում է ամրագրված հայ մշակույթի պահպանման գործում հայ առաքելական եկեղեցու պատմական բացառիկ առաքելության մասին, և դա կարող էր ազդել եկեղեցու դերի մասին մարդկանց պատկերացումների վրա:



ՆՈՅՆԱՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՊԵՏՔ Է ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՇՔԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Այս հարցը նույնպես այն դրույթների շարքից է, որոնց պատասխանները տարբերվում են մի շարք այլ սոցիալ-պահպանողական բնույթի հարցերի պատասխաններից:

Այսպես՝ օգտատերերի միայն 21 տոկոսն է համաձայն (որոնց թվում՝ 6.63%-ը խիստ համաձայն է), որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները իրավունք ունենան փրայդ (հպարտության շքերթ) անցկացնել: Կարծում ենք, որ այս թեման նույնպես այն հարցերից է, որոնց վերաբերյալ պատմականորեն ձևավորվել է որոշակի կայուն մոտեցում հանրությունում, և մինչ այժմ էլ չի ծավալվել ազատ բանավեճ, քննարկում, որը թույլ կտար մարդկանց վերանայել սեփական մոտեցումները: Հարկ է նշել, որ այս հարցի վերաբերյալ շատ են չկողմնորոշվածները՝ մոտ 15 %: Սակայն այստեղ էլ կին օգտատերերը՝ հատկապես երևանցի կին օգտատերերը, ամենից շատն են առաջադիմական պատասխաններ տվողների մեջ:





ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱԿ ՆՊԱՏԱԿԸ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ ՍՊԱՍԱՐԿԵԼՆ Է: ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՈՐԵՎԷ ՏԵՂ ՉՈՒՆԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Օգտատերերի մեծ մասը՝, մոտ 52 տոկոսը, համարում է, որ պետության արտաքին քաղաքականությունում համամարդկային արժեքները նույնպես պետք է տեղ ունենան: Մյուս կողմից այստեղ նկատելի է, որ օգտատերերի միայն մոտ 10 տոկոսն է «Միջազգային հարաբերություններում պետության միակ նպատակը ազգային շահը սպասարկելն է: Համամարդկային արժեքները որևէ տեղ չունեն պետության արտաքին քաղաքականությունում» դրույթին խիստ անհամաձայնություն արտահայտել:

ԽԻՍՏ ԱՆՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ



ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ



ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ



ԽԻՍՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ

ՊԱՏԱՍԽԱՆ ՉՈՒՆԵՄ

ԵՐԵՎԱՆ

Այստեղ նույնպես բավականին մեծ է կին և տղամարդ օգտատերերի միջև պատասխանների տարբերությունը: Եվ այստեղ նույնպես երևանցի կանայք ամենից շատն են առանձնանում բոլորից:





ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԻՐԱՎԱԽԱԽՏԻՆ ՊԱՏԺԵԼՆ Է, ՈՉ ԹԵ ՎԵՐՋԻՆԻՍ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՆ

Արդարադատության հիմնական նպատակը իրավախախտին պատժելն է, ոչ թե վերջինիս ռեաբիլիտացիան:



ԽԻՍՏ ԱՆՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ



ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ



ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ



ԽԻՍՏ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ

ՊԱՏԱՍԽԱՆ ՉՈՒՆԵՄ

Սա այն հարցերից է, որի վերաբերյալ կարիք կա հանրային լայն իրազեկման միջոցառումներ իրականացնել: Բնականաբար, այս հարցը ուղղակիորեն առնչվում է ժամանակակից ժողովրդավարական պետության կոնցեպցիային, որի վերաբերյալ պատկերացումների ճշգրտմանը կարող են նպաստել քաղաքացիական կրթության ծրագրերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր հետազոտությունից կարող ենք եզրակացնել, որ օգտատերերի մեծ մասն ընդհանուր առմամբ ձախ-կենտրոնամետ, չափավոր ազատական հայացքներ ունի: Սրանից, օրինակ, կարող ենք հետևություն անել, որ որևէ ծայրահեղական, աջ թե ձախ, պահպանողական, թե ազատական օրակարգով հանդես եկող հասարակական կամ քաղաքական ուժ, ամենայն հավանականությամբ, Հայաստանում չի կարող ունենալ հանրային լայն աջակցություն: Ըստ էության, ստացված արդյունքներից կարող ենք ենթադրել, որ Հայաստանի հասարակության զգալի հատվածի գաղափարախոսական պատկերացումները շատ մոտ են միջին եվրոպական պատկերացումներին: Ինչպես ընդհանուր առմամբ Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում հանրային լայն աջակցություն կարող են ստանալ մեծամասամբ կենտրանամետ ուժերը: Ընդ որում, կարող ենք ենթադրել, որ Հայաստանում մեծ պահանջարկ կա ձախ-կենտրոնամետ ուժերի, լուծումների նկատմամբ:

Այդուհանդերձ, մի քանի հարցերի վերաբերյալ հայաստանյան օգտատերերի զգալի հատվածի մոտեցումները տարբերվում են միջին եվրոպական մոտեցումներից: Դրանք են եկեղեցու և պետության հարաբերակցության հարցը, մարիխուանայի լեգալացման հարցը, ԼԳԲՏ համայնքի շքերթների անցկացման հարցը: Այս բոլոր հարցերի վերաբերյալ հայ օգտատերերի զգալի հատվածը ցուցաբերել է ավելի պահպանողական մոտեցում:

Ընդհանուր առմամբ ամենից առաջադիմական մոտեցումներ ունեցողների շրջանում ամենամեծ խումբը Երևանի բնակիչ իգական սեռի օգտատերերն են: Ամենից պահպանողական մոտեցումներ ունեցող օգտատերերի խմբում գերիշխում են արական սեռի մարզային օգտատերերը: